

ՌԱՖՖԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ 17,478 ՏՈԼԱՐ ԿՐԹԱՆՊԱՍՏ ԿԸ ՅԱՏԿԱՑՆԷ 2021-2022-Ի 84 ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ

ՀԱԳ-ի երկարամեայ նախկին աշակերտ ԷԼ դպրոցի բարերարներէն տիար Ռաֆֆի Մանուկեան, հաւատարիմ դպրոցի առաքելութեան իր յանձնառութեան եւ հաւատքին, 2021-2022-ի իր տարեկան կրթանպաստի յատկացումը աւելցնելով հասցուց 17,478 տոլարի՝ որպէս կրթաթոշակ 84 աշակերտներու:

Մեր յատուկ շնորհակալութիւնները ազնիւ ու երախտագետ բարերարին:



ԱՀԱԸ-Ի ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Չորեքշաբթի, 5 Մայիսին ՀԱԳ այցելեցին ԱՀԱԸ-ի նախագահ տոքթ. Նազարեթ Տարաքճեան (1970-ի շրջ.), ԱՀԱԸ-ի Մերձ. Արեւելքի յանձնախումբի ատենապետուհի տիկին Պերճուհի Պարսումեան-Կիլեսերեան (1965-ի շրջ.) եւ պարոն Մորիս Կիլեսերեան (1959-ի շրջ.): Չորեքշաբթի օրը Առաջին եկեղեցւոյ հովիւ՝ պատուելի Ժ. Ղազարեանը, դպրոցի հոգաբարձութեան ատենապետ պրն. Ն. Պաղտոյեանը, պատուակալ տնօրէն դոկտ. Չ. Մսրրլեանը եւ տնօրէն դոկտ. Ա. Իւրնէշեանը: Հանդիպումը առիթ էր հիւրերուն յայտնելու ՀԱԳ-ի երախտագիտութիւնը Աւետարանականին ու գործակիցներուն՝ անոնց օժանդակութեան համար, ինչպէս նաեւ զրուցելու դպրոցի հարկւրամեակի ծրագիրներուն մասին:

Շնորհակալութեամբ իմացանք որ Աւետարանականը դպրոցաշէնքի արտաքին ճակատի բարեգարդումին համար տրամադրած է 10,000 ամ. տոլար:

ՊԱՏՈՒՅՑ ԴՈԿՏՈՐԻ ՏԻՏՂՈՍՆԵՐ ԴՈԿՏ. ՆՈՒՊԱՐ ԱՖԷԷԱՆԻՆ



ՀԱԳ-ի նախկին աշակերտ Նուպար Աֆէեան 25 Մայիս 2022-ին Գանատայի Մքչիլլ համալսարանէն, իսկ 7 Յուլիսին Երեւանի պետական համալսարանէն ստացած է «Պատուոյ դոկտոր»ի տիտղոս, գիտութեան ոլորտին մէջ իր բազմաթիւ ձեռքբերումներուն համար:

Կը շնորհաւորենք ՀԱԳ-ի բարեկամ եւ բարերար դոկտ. Աֆէեանը այս արժանի պատիւին համար:

ՀԱԳ-Ի ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՅԱՅՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԸՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ՊՐԵՕԿԷ

Յաջորդաբար 9-րդ տարին ըլլալով, ՀԱԳ-ի աշակերտները կ'արձանագրեն բացառիկ՝ 100% յաջողութիւն 9-րդ դասարանի պետական քննութիւններուն:

Յաջողած աշակերտներն են.

ԱԼԵՏԵՃԵԱՆ ԶԻՒՏԱՓՈՐ

ՀԱՍՄՈՒՏ ՄՀԱՍՄԱՏ

ՀԱՍՏԱՏ ՍԵՐԻՆ («լաւ» յիշտկթ.)

ՇԱՀԻՆԵԱՆ ՍԵՐԻՆ-ՌՈՅԻ («շատ լաւ» յիշտկթ.)

ՊԱՏԱՏԱՃԵԱՆ ԱՐԻՆ («շատ լաւ» յիշտկթ.)

ՏԱԳԵՏԵԱՆ ԴԵԱՐ

ՊԱՔԱԼՈՐԵԱՅ

Յաջորդաբար 6-րդ տարին ըլլալով, ՀԱԳ-ի աշակերտները կ'արձանագրեն բացառիկ՝ 100% յաջողութիւն 12-րդ դասարանի պետական քննութիւններուն:

Յաջողած աշակերտներն են.

ԱՊԱՃԵԱՆ ՓԱԹՐԻՍԻԱ («շատ լաւ» յիշտկթ.)

ԳԱՐԱՍԱՆՈՒԿԵԱՆ ՆԱՐԷ («լաւ» յիշտկթ.)

ՉԵՅԹՈՒՆՅԵԱՆ ԷԼՎԻՐԱ («լաւ» յիշտկթ.)

ՊՕՐՈՍԵԱՆ ՆՈՅՏԵՒ («լաւ» յիշտկթ.)

►► 18 Յուլիս 2022-ին ՀԱԳ-ի տնօրեն դոկտ. Արմեն Իսրնեշլեան եւ Professional Learning Center-ի տեր եւ տնօրեն պր. Սա'ատ Սա'ատ, հոգաբարձության ատենապետ պր. Ներսէս Պաղտոյեանին ներկայութեամբ կնքեցին համաձայնագիր մը, որով 2022-23 տարեշրջանէն սկսեալ ՀԱԳ-ի առաջինէն 11-րդ դասարաններու բոլոր աշակերտներուն պիտի դասաւանդուին Արհեստական Բանականութեան (Artificial Intelligence) դասեր, առիթ տալով աշակերտներուն հմտացնելու իրենց կարողութիւնները այդ շատ կարեւոր բնագաւառին մէջ:



►► ՀԱԳ Ծնողաց մարմինի հրաւերով 12 Մայիսին Առաջին եկեղեցւոյ սրահին մէջ նախաճաշի սեղաններու շուրջ հաւաքուեցան 100 տիկիններ: «Ինչպէս դիմագրաւել տագնապները» նիւթով շահեկան դասախօսութիւն մը ներկայացուց հոգեբան-դասախօս տիկին Շաղիկ Խիւտավերտեան: Գեղարուեստական յայտագիրով ելոյթ ունեցան աշակերտներ: Հաճելին եւ օգտակարը համատեղող հաւաք մը եղաւ սա՝ Պսակաձեւ Ժահրի պատճառած երկարատեւ արգելափակումներէն ետք:



— 11-րդ դասարանի աշակերտ ՀՐԱԿ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ 24 Յուլիս 2022-ին, ձեռամբ Շահէ արք. Փանոսեանի, ձեռնադրուած է կիսասարկաւագ Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ:



— 9-րդ դասարանի աշակերտուհի ՍԷՐԼԻՌ ՌՈԶԻ ՇԱՀԻՆԵԱՆ փրկացած է Ազգ. առաջնորդարանի «Միեր Զուլհաճեան» շարադրութեան մրցանքի միջնակարգ բաժնի Գ. մրցանակին:

ԵՐԱՇՏՐՈՂԱԿԱՆ ՄԱՍԻՆ



Ուրբաթ, 5 Յունիսին տեղի ունեցաւ ասանդական երաժշտական մրցանքը, որուն մասնակցեցան Տարօն Գոճայեան եւ Մարի-Լուիզ Պոյմուշաքեան (կիթառ), Վահան Աւեսեան, Մարիա Էլմաճեան եւ Վահէ Միքայէլեան (ջութակ), Վարդան Աւեսեան, Նարեկ Չոլագեան եւ Մանէ Չոլագեան (դաշնամուր): Ի տարբերութիւն նախորդ տարիներու, գեղեցիկ յաւելում մը կատարուած էր ատենամարզանքին:

Արդ, այն առիթ ծառայեց, որ այլ տաղանդներ ունեցող աշակերտներ եւս հանդէս գան իրենց ստեղծագործութիւններով: Սահիկներու ցուցադրութեամբ կամ այլապէս ներկայացուեցան գեղանկարչական, քանդակի, լուսանկարչական եւ հագուստի ձեւաւորումի նմուշներ հետեւեալ աշակերտներէն. Ժուտի Ժապէր, Հուրի Տէր Յակոբեան, Սէրլի Շէքերճեան, Սերենա Հաւանճեան, Փաթիլ Մամիկոնեան, Դալար

Քիրէճեան, Սինթիա Տարաքճեան, Եուզերսիֆ Հալաուի, Էնճի Աբրահամեան, Հուտա ալ Սանտիտ, Սերենա Հատտատ, Դալար Կիլեքճեան, Նարի Քէօշկերեան, Գայիանէ Շէքերճեան, Վահան Աւեսեան, Մարիա Ծօզիկեան, Կապրիէլլա Նոիրա, Ռազմիկ Ինճէեան, Ֆապիօ Միրիճանեան, Հրակ Քէօշկերեան, Անտրիա Տէմիրճեան, Մանէ Չոլագեան, Նարեկ Քէօշկերեան եւ... կարգ մը ուսուցչուհիներ:

...

Նկատի առնելով, որ սոյն մրցանքին կ'որոշուի դարոցի «Սոնա Ահարոնեան» մրցանակի մրցանակակիրը, դատական կազմի անդամ հրաւիրուած էին պատուելի Ժիրայր Ղազարեան եւ պարոն Հենրի Իշխանեան:

Ատենամարզանքը պատրաստեց եւ վարեց օրիորդ Շաղիկ Բարսեղեան:





ՇՐՋԱՆԱԲԱՐՏԻՑ ՀԱՆԴԵՍ

ՀԱԳ-ի 95-րդ հունձքի շրջանաւարտութեան հանդէսը տեղի ունեցաւ 8 Յուլիս 2022-ին դպրոցի շրջափակին մէջ, աւելի քան 250 հիւրերու ներկայութեամբ: Երկրորդականէն շրջանաւարտ եղան 4 աշակերտուհիներ, իսկ նախակրթարանի ընթացաւարտներու թիւն էր 6: Աղօթք մատուցեց պատուելի Ժիրայր Ղազարեան, իսկ օրուան պատգամը յղեց պարոն Ճան Սաղըրեան: Ան իր

խօսքը հիմնեց «ինչո՞ւ» հարցումին կարելորութեան վրայ, շեշտելով «ինչո՞ւ ուսանիլ» գաղափարին վրան, ուսման ու աշխատանքի նպատակը կարելորելով իբրեւ ծառայութիւն, քան՝ դրամ շահելու միջոց: Ապա անդրադառնալով բանականութեան եւ հաւատքի թուացեալ երկութեան, Սաղըրեան նշեց թէ միտքը զԱստուած գտնելու եւ մարդկութեան ծառայելու միջոցով

Հարաւածներ փնտրէնին հոսկ բանքէն

... 99 տարի առաջ խումբ մը հայեր այս դպրոցը բացին եւ **երաշխատրութիւն տրուին** հայ ազգին, որ գոլէճը հոգ պիտի տանի ազգի զաւակներուն մարդկային, քրիստոնէական, ազգային եւ մտաւոր կրթութեան: Չըսին մէկ տարի, տաս տարի, հարիւր տարի. lifetime warranty տուին, առանց պայմաններու: Այդ **երաշխատրագիրը**, տեղ մը արձանագրուած չէ. անիկա համոզու՞մ է, սերունդէ սերունդ երկարող յանձնառութիւն, որ հիմնուած է գերագոյն ուսուցիչ Յիսուս Քրիստոսի քարոզած ուսմունքին եւ ուսուցչապետ Մեսրոպ Մաշտոցի հաստատած ասանդներուն վրայ: Տեսլապաշտ հիմնադիրներուն յաջորդեցին ուրիշներ, որոնք ապահովեցին այդ **երաշխիքին** շարունակութիւնը, որովհետեւ ազգային հոգեւոր, քաղաքացիական եւ մտային կրթութիւնը բոլոր ժամանակներու մէջ ալ արժէք է: Գիտութիւնը կը զարգանայ, ուսումի տեսակը եւ ձեւը կը փոխուի, բայց կրթութիւնը կը մնայ, որովհետեւ անիկա ոչ թէ հարուստ կեանքի, լաւ պաշտօնի, բարձր փառքի, այլ՝ ՃԻՇԴ կեանքի բանալին է: Նախորդ 94 տարիներուն 1621 շրջանաւարտներ եւ հազարաւոր թերաւարտներ անցան կրթութեան այս բովէն, այս դպրոցին մէջ եւ ահաւասիկ հասանք ձեզի:

... Տարիներ շարունակ մեծցաք մարմինով, միտքով ու հոգիով այս հաստատութեան մէջ, որ **երաշխատրեց** ձեր ուսումը, կրթութիւնը, ապահովութիւնը: Ձեզմէ վերջ ուրիշներ ալ պիտի գան օգտուելու **երաշխատրուած** կրթութենէն որ կու տայ Հայ Աւետ. Գոլէճը: Եւ այսպէս շարունակ, այսպէս յարատեւ...:





Ինքնին Աստուծոյ ծառայած ըլլալու հրաշալի գործիք է: Ապա ան կոչ ուղղեց շրջանաւարտներուն, որ տարիներ ետք երբ կեանքի ասպարէզ մտնեն, երախտապարտ մնան ՀԱԳ-ի հանդէպ, որպէսզի իրենց նման ուրիշներ ալ կարենան ուսում ստանալ այստեղ:

Նախակրթարանը ելոյթ ունեցաւ հրաժեշտի խօսքերով, իսկ Սոնա Ահարոնեան երաժշտական մրցանքի մրցանակակիրներ Մանէ Չոլագեան (10-րդ) եւ Վարդան Աւեսեան (7-րդ) նուագեցին դաշնամուրի վրայ Շոփէնէն ու Պապաճանեանէն ստեղծագործութիւններ: Յուցադրուեցաւ դարոցի տարին եւ 12-րդի առօրեան ներկայացնող տեսերիզ: Ուղերձներ կարդացին Փաթրիսիա Ապաճեան (արաբերէն) եւ Նարէ Գարամանուկեան (հայերէն), ապա շրջանաւարտները ծնողաց եւ ուսուցիչներուն նուիրեցին երախտագիտութեան յուշանուէրներ եւ ծաղկեփունջեր: Հուսկ բանքը արտասանեց տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշեան: Հովիւին ու հոգաբարձութեան ատենապետ պրն. Ներսէս Պաղտոյեանի ձեռամբ յուշանուէրով ու վկայագիրով պատուեցան վերերան շրջանա-



ւարտներ պարոնայք Միհրան Ղորղորեան եւ Գէորգ Գրաճեան (1962-ի շրջ.): Հանդէսին յաջորդեց Ծնողաց մարմինի կազմակերպած հիւրասիրութիւնը:


• • •

Նշենք, որ 5 Յունիսին, Հայ աւետ. առաջին եկեղեցւոյ կիրակնօրեայ պաշտամունքին ընթացքին տեղի ունեցաւ շրջանաւարտներու նուիրման պաշտամունք, եկեղեցւոյ ժողովուրդին, ուսուցիչներու եւ ծնողներու ներկայութեամբ:





Մեծի տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը 31 Մայիսին «Ասպետ»-ի շքանշանով պատուեց Ամերիկայի Արեւմտեան թեմի ազգային վարչութեան ատենապետ Վահէ Յովակիմեանը (1969-ի շրջ.): Ան 22 Մայիսին կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ տաճարին մէջ ստանձնած էր կնքահայրութիւնը երեք նորընծայ արեղաներու: Նախապէս Վ. Յովակիմեան կաթողիկոսին գահակալութեան 25-ամեակին առիթով, ընդառաջելով Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդի կոչին, ՀՅԴ Ակնունի կոմիտէին նուիրած էր 10,000 տոլար՝ ստանձնելով Լեյլաւանի Մայիս ամսուան ելեկտրականութեան հայթայթումը:



Լոսանճելոսաբնակ տոքթ. Արմէն Կէօսճեան (1964-ի շրջ.) համահեղինակներէն է *Lessons Learned in Disaster Mental Health, The Earthquake in Armenia and Beyond* գիտական գիրքին որ լոյս տեսած է Ապրիլ 2022-ին Քեմպրիճ համալսարանի հրատարակութեամբ:

Փրոֆ. Սեպուհ Այնթապլեան (1984-ի շրջ.) Երեւանի մէջ 25 – 27 Մայիսին տեղի ունեցած Համազգային հայ կրթական եւ մշակութային միութեան Թ. պատգամաւորական ժողովին ընտրուած է կեդրոնական վարչութեան անդամ:

7 Մայիս 2022-ին Էշրէֆիէի Հայ աւետ. կեդրոնական բարձրագոյն վարժարանի հիմնադրութեան 100-ամեակի հանդիսութեան բանախօսներն էին Ամերիկայէն հիւրաբար եկած ԿԲՎ-ի նախկին տնօրէն Արթուր Համալեան (1968-ի շրջ.) եւ Ամերիկայի հայ աւետարանչական ընկերակցութեան նախագահ տոքթ. Նազարէթ Տարազճեան (1970-ի շրջ.):



Մոնթրէալի Ս. Յակոբ մայր եկեղեցիի հոգաբարձութեան ատենապետ Թորոս Պապիկեան (1978-ի շրջ.) 3 Ապրիլ 2022-ին բարի գալուստի խօսք ուղղած է Ահարոնեան վերանորոգուած սրահի բացման հանդիսութեան:




Երաժշտագէտ, խմբավար մաէսթրօ Կարօ Աւետեան (1998-ի շրջ.) 1 Ապրիլ 2022-ին ՀԲԸՄ-ՀԵԸ Անդրանիկ մշակութային միութեան կազմակերպութեամբ Անսօ Պապաճանեանի նուիրուած յիշատակի հանդէսին բանախօսն էր: Ձեռնարկի աւարտին Միութեան պատասխանատուները Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Վահագն Աթաբեկեանի ձեռամբ յուշանուէրով մը պատուեցին զինք: Իսկ 8 Ապրիլին Աւետեան դէ-



կավարեց Լիբանանի ազգ. սիմֆոնիք նուագախումբը Սէն Ժոզէֆ համալսարանին մէջ, Զատկուան յայտագիր մը գործադրելով:

Թէքէեան մշակութային միութեան Նիւ Եորքի մասնաճիւղը նախաձեռնութեամբ վարչութեան ատենապետուհի տիկ. Հիլտա Քիրէճեան-Յարութիւնեան (1985-ի շրջ.) 2 Ապրիլին կազմակերպած էր զատկական հաւաք մը մանուկներու համար:

19 Ապրիլ 2022-ին Հայ աւետ. Ա. եկեղեցիի հանդիսարանին մէջ Հաճնոյ հայրենակցական միութեան եւ Հայկազեան համալսարանի հրատարակութեամբ լոյս տեսած գիրքերու շնորհանդէսին խօսք առաւ ՀԱԳ նախկին աշակերտ եւ Սահակեան Մկրտիչեան լիսէի նախկին տնօրէն Նազարէթ Զերեճեան: Ձեռնարկի աւարտին յուշանուէրներ տրուեցան ձեռամբ ՀԱԳ երկարամեայ նախկին աշակերտ Փոլ Եագուպեանի:



I Թեքեան մշակութային միության Փասատե-նա-Կլինտոյի վարչության վարիչ քարտուղար տիկ. Մայտա Քիրեճեանի (1968-ի շրջ.) ջանքերով 15 Մայիս 2022-ին կազմակերպում է «Նոր տա-ղանդներ» ձեռնարկը Աթատենայի Պեշկեթիլ-եան սրահին մեջ:



I Սարգիս Սիսլեան (2010-ի շրջ.), անհատական նկարչա-կան ցուցահանդես մը տուաւ Զիգո կեդրոնին մէջ 26 Մայի-սին 9 Յունիս 2022-ին:

I Ճեյմս Տեկիրմենճեան (2013-ի շրջ.), 23 Ապրիլ 2022-ին հայոց ցեղասպանութիւնը պատկերաց-նող նկարչական գործով մը մասնակցեցաւ Փոլա Եագուպեանի կազմակերպած յուշահանդէսին:



I ՀԱԳ-ի նախկին աշակերտ Յարութ Ներսէսեան, 26 տարի ձեռնհասօրէն ղեկավարելէ ետք Ա-մերիկայի հայ անտարանչական ընկերակցութեան Հայաստանի գրասենեակը, կը տեղափոխուի ԱՀԱԸ-ի կեդրոնական գրասենեակ իբրեւ դաշտի տնօրէն:

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԾՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐԸ

ՍԱՐԱԼ ԳՈՃԱՏԵԼԵԱՆ-ՎԱՍԻԼԵԱՆ (1998 շրջ.) AUB
MA, Nursing

ԱՐԵԳ ՏԱՂԵԱՆ (2011 շրջ.)
Yerevan State Conservatory
MA, Piano performance

ԿԱՍԻԱ ՀԱՃԵՔԵԱՆ (2015 շրջ.) USEK
BA, Management and entrepreneurship

ՀԱՅԱՐԻ ՏԱԳԵՍԵԱՆ (2015 շրջ.) NDU
BA, Phys. Ed. & Sports

ՍԱՐԻԱՆԱ ԳԱՐԱԿԻԼԵԱՆ (2017 շրջ.) UOB
BS, Public Health & Dev. Sciences

ԹԵՐԶԵԱՆ ՃԵՍԻՔԱ (2017 շրջ.) AUB
BBA, Business Administration & Marketing

ԿԵՐԻ ԼԵՓԵՃԵԱՆ (2018 շրջ.) HU
BBA, Business Administration

ԹԵՐԶԵԱՆ ՍԵՐԺ (2018 շրջ.) AUB
BA, Finance

ՊԱՍԵՐ ՍԱՆՏՐԱ (2019 շրջ.) UOB
BS, Public Health & Dev. Sciences

Մ Ա Հ




† ՀԱԳ-ի 1972 – 1976 եւ 1978 – 1985 տարիներու թուարանութեան եւ ԱՄՆ-ի Հեմփրի Քորթ դպրոցի թուարանութեան բաժանմունքի արեւնապետ, վաստակաւոր ու-սուցչուհի Տիկ. Մարիա (ծն. Պիլպիլեան) Ակիլ-եան (1950-2022) մահացած է 19 Մայիս 2022-ին ԱՄՆ-ի մէջ, յետ անողորմ հիւանդութեան:



† 1953-ի շրջանաւարտ Գեորգ (Ճորճ) Տէր Պետրոսեան, Երեւա-նի մէջ մահացած է 15 Մայիս 2022-ին:

† Յապաղումով տեղեկացանք 1960-ի շրջանա-ւարտ Յակոբ Խաչերեանի (1939-2021) Պէյրութի մէջ մահուան գոյժին:



† ՀԱԳ-ի նախկին աշակերտուհի տիկին Ճէսի Նիւյիւճիքեան-Յակոբեան (1951 – 2022) 13 Յունի-սին ԱՄՆ-ի մէջ մահացած է յետ անողորմ հիւանդութեան:

ԲԱԽՏԱԽՈՐՈՒԹԻՒՆ

• Երկարամեայ նախկին աշակերտուհի Տիկ. Վերա (ծն. Մահրեսեան) Եթիմեան 20 Մայիսին բախտաւորուեցաւ երկուորեակ զոյգ մանչերով, Պէյրութ:

ՊՍԱԿ

• 1990-ի շրջանաւարտ Սարգիս Մահրեսեան 12 Յունիս 2022-ին պատկուեցաւ Կորթ. Աննա Մա-կարեանի հետ Երեւանի Ս. Սարգիս եկեղեցիին մէջ:

• 2012-ի շրջանաւարտ Կարին Հայրոսեան 30 Յունիս 2022-ին պատկուեցաւ պոսթոնահայ պրն. Նորայր Օրջանեանի հետ, Աշրաֆիէի հայ ատեր. եկեղեցոյ մէջ:

Մեր խնդակցութիւնները նորապսակ զոյգերուն:

«Կամուրջներ» ծրագրի երրորդ մասով Ուրբաթ 13 Մայիսին ՀԱԳ-ի մեջ տեղի ունեցավ «կամուրջ դեպի հայկական արմատներ եւ մշակոյթ» ձեռնարկը, կազմակերպութեամբ տիկ. Անի Պիլալեանի եւ օր. Վարդուկ Ֆոնըզլեանի: Առտուայ 9-էն մինչեւ արձակման ժամը ամբողջ դպրոցը՝ մանկապարտէզէն երկրորդական, կը թնդար հայ մշակոյթի արձագանգներով՝ գեղարուեստական ելոյթներ, արուեստագէտներու հետ հանդիպումներ, ձեռային աշխատանքներ, աշխատանոցներ եւ անշուշտ երգ պար ու ճաշ...



Հիւրընկալուեցան եւ աշակերտներուն խօսեցան գեղանկարիչ պր. Գրիգոր Նորիկեան, նորոգ հանգուցեալ քանդակագործ տիկ. Կիլէն Տէր Պողոսեան եւ բեմադրիչ պր. Վաչէ Ապրունի

Թաւջութակահարուի օր. Նայիրի Ղազարեան (որ նաեւ դպրոցի երաժշտութեան ուսուցչուհին է), եւ պր. Ճօ Տաւի կը նուագեն կոմիդասեան մանրանուագներ



Պր. Վազգէն Մուղալեանի առաջնորդութեամբ աշակերտներ պատրաստեցին վեցմեթրանի պաստառ



Պր. Գօգօ Աւետեան աշակերտներուն սորվեցուց կաւով նուռ ու հայկական նախշերով հարթաքանդակներ պատրաստել



Հայ ազգագրական մշակոյթի ջարագով ու պահպան օր. Արփի Մանկասարեան կը վարէ ձեռարուեստի աշխատանոց



Տիկնայք Արշօ Աւետեանի եւ Սոնա Մուղալեանի օգնութեամբ տարբեր տարիքի աշակերտներ պատրաստեցին եւ ներկաներուն հիւրասիրեցին նազուկ եւ մանթըր



Ձեռային աշխատանք



Երգ ու պար



«Անմոռուկ»-ի արձան՝ Հայկազեան համալսարան

22 Ապրիլին ՀԱԳ-ի Հայկական եւ Ս. գիրքի ակումբներու աշակերտները, հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան 107-ամեակին առթիւ, առաջնորդութեամբ իրենց պատասխանատուներ տիկնայք Անի Պիլալեանի եւ Հռութ Եունիսէսի եւ ընկերակցութեամբ տնօրէնին ու այլ ուսուցիչներու, ունեցան ուխտագնացութիւն մը դէպի Լիբանանի մէջ գտնուող Մեծ եղեռնի յուշակոթողները:



↑ Հայ կաթողիկէ պատրիարքարանի յուշակոթող
← Մեծ եղեռնի աշխարհի առաջին յուշակոթող՝ Ֆըրըն էլ Շպպէքի ազգային գերեզմանարուն



← Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի Ս. Սրբեմանոս նահապտակաց մատուո
↑ Պիքֆայիայի յուշարձան
← Հայոց ցեղասպանութեան «Արամ Պէգիկեան» թանգարան

ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԼՐԱՏՈՒ»-ի նախորդ թիվն է վեր շնորհակալությամբ ստացանք հետևեալ նուիրատուութիւնները.

LEBANESE LADIES CULTURAL SOCIETY-էն տարեկան կրթանապաստի յատկացում
Արդար է նշել որ 1964-ի շրջանաւարտ օրդ. Մարի Լուիզ Մենէշեան
սոյն գումարին 2250 տոլարը ինք տրամադրած է:

5800 տոլար

AMAA-ի ԿՈՐՄԷ	ԱՄ. ՏՈԼԱՐ	ՇՐՋԱՆԱԿԱՆ ՍՈՐԻՍ ԿԻԼԵՍԵՐԵԱՆԻ ՏԱՐԵԴԱՐՁԻ, ՓՈԽԱՆ ՆՈՒԵՐԻ	
Մայիս-Յունիս-Յուլիսի յատկացում	2500	Այտա Աբրահամեան	250
Լիբանանի Հայ աւետ. դպրոցներու յատուկ յատկացում	17500	Արթին Աղաճանեան	250
Փիլիպպոսեան հիմնադրամ	2400	Ռաֆֆի Թոքաթեան	250
ՄԱՀԱԵ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՈՎ	ԱՄ. ՏՈԼԱՐ	Լուտեր Կեյիքեան	250
Foundation Des Cedres	3565	Վարուժան Զարիստեան	250
ՈՒՐԱԿԻ ԴՊՐՈՑԻՆ	ԱՄ. ՏՈԼԱՐ	Վ. և Ռ. Անեստեզ	200
Տիկ. Յասմիկ Հալեպլեան	200	Հայկ Ասատուրեան	200
Դպրոցի անձնակազմի bonus fund-ին		Զաւէն Խանճեան	200
Տեր եւ տիկ. Սորիս եւ Պերճուհի Կիլեսերեան	200	Ճօն Խրլոքեան	200
Հ.Ա.Գ. իրենց այցելութեան առիթով		Յարութիւն Միսիրլեան	200
Տեր եւ տիկ. Թոմ եւ Մելինէ Մերճանեան	100	Վիքի Յովհաննէսեան	200
Տեր եւ տիկ. Մեթյու եւ Սալբի Թոքաթեան	100	Սեդա Նալպանտեան	200
Տիկ. Վիքի Պապիկեան, Զատկուան առթիւ	20	Պերճ Պարսում	200
Տիկ. Վանեսա Ֆրանսիս	300,000 Լ.Ո.	Արա Պարսումեան	200
Հայ մշակոյթի օրուան առիթով		Միսաք Պարսումեան	200
Ծնողք մը	750,000 Լ.Ո.	Անդրեաս Ռուպեան	200
Կարիքաւոր աշակերտի մը թոշակին		Ճօն Սալիպեան	200
ՀԱԳ-ի անձնակազմը	300,000 Լ.Ո.	Ճօն Քահվէճեան	200
Գրիգոր Անթունեանի մահուան առիթով		Կարպիս Քալաշեան	150
Շրջանաւարտ Զաւէն Լեփեճեան ստանձնեց դպրոցի կայքէջի domain-ի Microsoft Azure ընկերութեան վարձքի տարեկան ծախսերը:		Ռուբէն Ալթան	100
AMAA-ի ՄԻՋՈՑՈՒՄ	ԱՄ. ՏՈԼԱՐ	Սթիվ Ալթան	100
ՈՒՍՈՒՑՉԱՅ ՖՈՆԴԻՆ		Զիլվինաս Աւելլինօ	100
Յակոբ Խաչատուրեան	200	Վաչէ Պաղտիկեան	100
ԴՊՐՈՑԻՆ		Հայկազուն Զալեան	100
Վիգէն Գրաճեան	2500	Դանիէլ Կիլեսերեան	100
Հրայր Կարապետեան	500	Նուրիան և Սելեսթ Էլվաճեան	100
Առնոլտ Պապիկեան	500	Ժանէթ Յովհաննէսեան	100
Շանթ Սարեան	500	Կարպիս Քալաշեան	100
Արթուր Յարութ Մեսրոպեան	200	Յաւերժ Մանուշակեան	100
Ճէնի Յովսէփեան	200	Ռեյ Մարանկոսեան	100
Հրայր Կիլեսերեան	100	Վարուժան Մազմանեան	100
Ռոպեր Մենէշեան	100	Թովմաս Մերճանեան	100
Կարպիս Պետոյեան	100	Օննիկ Սեմերճեան	100
Արթուր Սալիպեան	100	Մեթիու Թոքաթեան	100
Փոլ Քարլոզեան	100	Ճոյս Արթինեան	80
Գրիգոր Մերմապէիքեան	50	Ժան Պետրոսեան	80
		Վերա Իսկէնտերեան	75
		Միշէլ Շալիուպ	75
		Շաքէ Պաթիստա	60
		Ժան Ռեսուիք	60
		Նայիրի Արթինեան	50
		Էնտրիւ Թորիկեան	50
		Սօսի Մազմանեան	50
		Ընծայ Նալպանտեան	50
		Պասէլ Սաֆֆաֆ	50

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՁՆԻ ՆՈՒՐԱՏՈՒՆԵՐՈՒՆ

Խմբագիր՝ ՏՈՐԵՆ ՂՈՎՏ. ԱՐՄԵՆ ԻՐԱԵՇԼԵԱՆ
Խորհրդատուներ՝ ՏԻՍԻ ՆԵՐՍԵՆ ՊԱՐՏՈՅԵԱՆ
ՏԻՍԻ ՅԱԿՈԲ ՏԵՒԻԺԵԱՆ
Էջաղորում՝ ԱՆԻ ՔԵՍԵՆԵԱՆ ՊԱՍԵՐ
Մ.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԶՐԱՏԱՐԱԿՉՈՒԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE
P.O. Box 3672-Beirut
Tel: 01 349 816 Fax: 01 751 469
E-mail: A_E_C@cyberia.net.lb
Website: aecbeirut.edu.lb
Facebook: Armenian Evangelical College